ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«25» մայիսի 2026թ No 2948-Ա

«ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առողջապահության նախարարություն կողմից 16.01.2026թ. էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2» ծածկագրով գնման ընթացակարգը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի հունվարի 26-ը՝ ժամը 12:00-ը:

2026 թվականի հունվարի 26-ին՝ ժամը 12:00-ին, գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել թվով 2 կազմակերպություններ, որոնցից առաջին տեղը զբաղեցրել է Եղիա Մնացականյան Ժորայի ԱՁ-ն:

Եղիա Մնացականյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն, որը ենթակա է եղել շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման գործընթացը և մասնակցին հնարավորություն ընձեռել շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված՝ կազմակերպությանը հասցեագրված շտկման ծանուցումը.

- Հարգելի՛ գործընկեր,

Հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրվել է անհամապատասխանություն. Հավելված 1-ով ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշված է միայն 1-ին չափաբաժինը, մինչդեռ Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկը վերաբերում է երկու չափաբաժիններին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Շտկված փաստաթուղթը անհրաժեշտ է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ մինչև 04.02.2026թ. ներառյալ:

Եղիա Մնացականյան ԱՁ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացրել համապատասխան շտկված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2» ծածկագրով գնման ընթացակարգի համար սահմանվել է անգործության ժամկետ՝ 10.02.2026թ.-ից մինչև 19.02.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում է ուղարկվել Եղիա Մնացականյան ԱՁ-ին և վերջինիս հետ կնքվել է պայմանագիր:

Սակայն պայմանագրի կնքման սկզբնական փուլից ի վեր Կազմակերպությունը չի ապահովել ծառայությունների պատշաճ և ժամանակին մատուցումը: Բազմիցս խախտվել են ծառայությունների մատուցման վերաբերյալ ծեռք բերված պայմանավորվածությունները, ինչպես նաև պատշաճ արձագանք չի ցուցաբերվել հեռախոսազանգերին և հաղորդակցություններին:

2026 թվականի ապրիլի 28-ին էլեկտրոնային փոստով Ձեզ ուղարկված հաղորդագրությամբ ներկայացվել էր օդորակիչի վերանորոգման ծառայություն մատուցելու պահանջ, որը ևս Ձեր կազմակերպության կողմից անտեսվել է և սահմանված ժամկետում չի իրականացվել: Միաժամանակ, նշված հաղորդագրությամբ նախազգուշացվել էր, որ պայմանագրային պարտավորությունների հերթական չկատարումը կհանգեցնի Առողջապահության նախարարության կողմից համապատասխան միջոցների ձեռնարկմանը:

Պայմանագրի 2.1.3 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանգրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Հետևաբար, վերոնշյալ գնման ընթացակարգի իրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ սահմանված չի եղել, քանի որ չափաբաժինների գնման գները չեն գերազանցել 25 միլիոն դրամը:

Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու, կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ եթե որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ առկա է մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործ, ապա՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, պայմանով, որ դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից՝ երկու տարի ժամկետով:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2 | ՀՀ ԱՆ ԳՀԾ ՁԲ-2026/2/2 | 1 | Սարքերի և սարքավորումների սպասարկում՝ Օդորակիչներ | 900 000 | 900 000 | «Եղիա Մնացականյան» ԱՁ | 48712965 | Ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա,Անդրանիկի 105շ. բն.44 | Առողջապահության նախարարություն | 12.05.2026 | Պայմանագրի 2.1.3 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագ | Առկա չէ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | իրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը: | |
| ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2 | ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2 | 2 | Սարքերի և սարքավորումների սպասարկում՝ | 100 000 | 100 000 | «Եղիա Մնացականյան» ԱՁ | 48712965 | Ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա,Անդրանիկի | Առողջապահության նախարարություն | 12.05.2026 | Պայմանագրի 2.1.3 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե | Առկա չէ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սառնարաններ | | | | | 1052. բն.44 | | | Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը | |

5/25/2026

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ